




ԳԵՎՈՐԳ ԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՇՈՒՐԶ

Էջմիածնի կաթողիկոսարանը Հայաստանի գիտությունների ակադեմիայի հրատարակչությամբ հրապարակել է սլավոնագետ Ղազար Այվազյանի «Միջին դարերի ռուսական և հայկական եկեղեցիների հարաբերությունների պատմությունը»: Ռուսերեն շարադրված սույն մենագրությանը նախորդած շրջանում երբևէ փորձ չի արվել գրելու հայ-ռուսական եկեղեցական հարաբերությունների պատմությունը: Ղ. Այվազյանն առաջին մասնագետն է, որ խիզախել է ձեռնարկել այսպիսի մի դժվար գործի: Դժվարությունը սկզբնաղբյուրների սակավության մեջ է: Եթե, ասենք, հայ-հունական, հայ-ասորական կամ հայ-լատինական հարաբերություններն ուսումնասիրողների տրամադրության տակ կան համեմատաբար ավելի շատ նյութեր, ապա Այվազյանն ի՛նքն է մեծ մասամբ բացահայտել դրանք: Տարիների ընթացքում հավաքելով և հրապարակելով առանձին-առանձին խնդիրների նվիրված ուսումնասիրություններ՝ նա այդ ամենն ամփոփել է մենագրությունում, որում ներգրավված են նաև նոր հայտնաբերված սկզբնաղբյուրներ: Ի տարբերություն հայ-լատինական (և այլ) հարաբերությունների պատմության մասնագետների՝ Ղ. Այվազյանը կանգնած է եղել նաև մեկ այլ, ավելի դժվար հաղթահարելի խոչընդոտի առջև: Եթե հիշյալ մասնագետներն ի վիճակի են եղել ամենայն ազատությամբ ի հայտ բերելու հակառակորդ եկեղեցիների թշնամական վերաբերմունքն արտացոլող փաստաթղթեր, ապա հայ-ռուսական հարաբերությունների մասնագետը նման դեպքերում կարող էր հայտնվել վտանգավոր կացության մեջ:

Ես քիչ հետո ցույց կտամ, թե ինչպես են տուժել նույնիսկ օտարազգի գիտնականները, որոնք փորձել են ճշմարիտ լույսի տակ ներկայացնել հայ եկեղեցական ճարտարապետությունը, համեմատելով այլ ճարտարապետությունների հետ: Իսկ այժմ պետք է հայտնեն, որ Ղ. Այվազյանի

բարձարժեք մենագրության մեջ տեղ գտած որոշ թերություններ արդյունք են հարգարժան գիտնականի օգտագործած գիտական գրականության մեջ առկա այն սխալ մեկնաբանությունների, որոնց հեղինակները՝ տուրք տալով քաղաքականությանը, սկզբնաղբյուրներում տեսել են անիրական մտքեր:

Ծուրջ կես դար է, ինչ իշխում է այն կարծիքը, թե հայկական եկեղեցին 12-րդ դարում պահանջ է զգացել դիմելու ռուսական եկեղեցու օգնությանը: Եթե իսկապես այդպես լինե՞ր՝ հայ եկեղեցին կունենար մի զորավոր օգնական: Սակայն այսօր անհրաժեշտ է հետամուտ լինել ճշմարտությանը՝ գոնե 800 տարի առաջ անցած-գնացած իրողությունները ներկայացնելիս: Տարիների քանակը (800 տարի) պատահաբա՛ր չեմ հիշատակում: 1948 թ. Խորհրդային Միությունը նշեց Մոսկվայի հիմնադրման 800-ամյակը: Հայաստանի գիտական պարբերականներում, զանգվածային ընթերցողի համար նախատեսված լրագրերում, առանձին մենագրություններում հրապարակվեցին հոբելյանին նվիրված նյութեր, որոնցից և սկիզբ է առնում 12-րդ դարում հայոց կաթողիկոսի կողմից ռուսական եկեղեցուն օգնության խնդրանքով դիմելու պահանջի մասին վարկածը: Երկրորդ թյուրիմացությունը, որը գիտական գրականության մեջ համատարած ընդունելություն է գտել, վերաբերում է մեկ այլ կաթողիկոսի՝ Ներսես Ենոքիանյանի, որն իբր գրել է ռուսներին վերաբերող հանելուկ և գործածել է ռուսերեն «դենգի» բառը: Միևնույն հոբելյանից է բխում նաև մի երրորդ թյուրիմացություն, որի համաձայն հայ ժողովուրդը միջնադարում գրել է Մոսկվային նվիրված մի պոեմ: Ցավոք սրտի բոլոր երեք թյուրիմացություններն էլ անվերապահորեն կրկնել են մի շարք հեղինակավոր մասնագետներ: Այսօրվա հոդվածս նվիրված է այդ թյուրիմացությունների վերացմանը: Եվ քանի որ հոդվածի առիթը Այվազյանի մենագրությունն է, կանդրադառնամ մենագրությունում արձարծված նաև այլ խնդիրների: Մենագրությունն այնքան բազմակողմանի է և ընդգրկում է այնքան մեծ մի ժամանակաշրջան (ամբողջ միջնադարը), որ պահանջում է համակողմանի քննություն և կարոտ է հատուկ գրախոսականների, որոնց հեղինակները լինելու են նաև ռուս եկեղեցու պատմության մասնագետները:

Հիշյալ երեք թյուրիմացությունների անդրանիկ աղբյուրը 800-ամյակի առթիվ գրված «Մոսկվան միջնադարյան հայկական մի պոեմում» խորագիրը կրող հոդվածն է, որը հրապարակվել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների «տեղեկագրում» (1948, № 3): Այստեղ կարդում ենք. «Հայ ժողովրդի առաջադեմ ներկայացուցիչների մի ստվար հատված, հանձին Գրիգոր Տուտեռդու, առաջին անգամ մեր իրականության մեջ, խնդիր է բարձրացնում դիմել ռուս ժողովրդին «խընդրեալ զպատշաճս ի նոցանէ»: Այդ իսկ պատճառով էլ միանգամայն բնական է, որ մեր միջնադարյան պոեզիան իր էջերում հիշատակե՞ր հայ ժողովրդի հին բարեկամին՝ ռուսներին: Եվ իսկապես... հանդիպում ենք նաև «ըռուզ» անվան հիշատակմանը: Ներսես Ենոքիանյան է այն առաջին բանաստեղծը (12-րդ դար), որն իր... հանելուկներից մեկում «ըռուզ» բառի դիմաց գրում է նաև «ունին հազար դենկի խնդուզ... Միջնադարյան պոեզիայում (և արձակում) առաջին անգամ հանդիպում ենք այն նվիրական քաղաքի անվանը, որը կոչվում է Մոսկվա»:

Սույն տողերի հեղինակի անունը ես չեմ նշում ոչ թե թաքցնելու համար ինչ-որ հանցագործի, այլ համոզված լինելով, որ նրա հոդվածի տակ կստորագրեին բոլոր այն հեղինակավոր գիտնականները, որոնք անառարկելի

են համարել և նույնությամբ կրկնել ու տարածել են հողվածում ներկայացված տեղեկությունները: Ժամանակներն էին այդպես: Հեղինակավոր էին համարվում նրանք, ովքեր քաղաքականությանը համընթաց էին քայլում: Հողվածի իրական հեղինակը Մոսկվայի 800-ամյակն էր: Դրանում համոզվելու համար հիշենք նաև Երևանի համալսարանի գիտական աշխատությունների 27-րդ հատորում նույն օրերին հրապարակված մեկ այլ հողված, որի վերնագիրն ու բովանդակությունը գրեթե նույնն է. «Ռուս ժողովուրդը և Մոսկվան միջնադարյան հայ մատենագրության մեջ»: Ինչպես ասացի, ամենուրեք փառաբանվում էր «այն նվիրական քաղաքը, որի անունն է Մոսկվա»: Չփառաբանելը հավասար էր դավաճանության, և ակադեմիան ու համալսարանը չէին կարող չարձագանքել իրադարձությանը: Փառաբանում էին նույնիսկ հին մատենագրությունից զուրկ և Մոսկվայի մասին որևէ գրավոր տեղեկություն չունեցող ազգերը:

Ի տարբերություն մյուսների՝ հայերը կրում էին նաև մեկ այլ պատասխանատվություն. պարտավոր էին ենթարկվել ոչ միայն համամիութենական, այլև անդրկովկասյան քաղաքականությանը: Եթե մյուս հանրապետություններն առիթ չունեին իրենց եկեղեցական շինարարությունը համեմատելու քրիստոնեական Անդրկովկասում կառուցվածքների հետ, ապա հայերը հարկադրված էին ոչ միայն համեմատել, այլև նախապատվությունը տալ Պաշտամունքի պապերի կառուցածին: Հարկադիր «գիտական» պլանը տարածվում էր նաև Հայաստանում ելումուտ ունեցող այլազգիների վրա: Ն. Մ. Տոկարսկին 1946 թ. հրատարակեց «Հին Հայաստանի ճարտարապետությունը» մենագրությունը, որում հայտնվում էր, որ Մցխեթի տաճարը կառուցվել է ավելի ուշ, քան նմանատիպ կառույցները Հայաստանում: Այսպիսի «հանդուգն» հայտարարության համար ռուս գիտնականը մեղադրվեց «հայկական նացիոնալիզմի» մեջ և հայտարարվեց օրենքից դուրս: Նրա անունը մտցվեց «սև ցուցակի» մեջ և հրապարակվեց նույն թվականին Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտկոմի ընդունած որոշումում. «Տոկարսկու գրքում թույլ է տրվում հայկական և վրացական կուլտուրաների հակադրություն»: Միևնույն որոշմամբ մեղադրվում էին նաև Հ. Աճառյանը և Ե. Տեր-Մինասյանը, որոնք բարի խոսք էին ասել արևմտյան գիտնականներ Մեյեի և Մարկվարտի հասցեին: «Հայկական նացիոնալիզմի» մեջ մեղադրվում էր նաև ավստրիացի հռչակավոր արվեստաբան Յոզեֆ Ստրծիգովսկին, որը փոխանակ վրացական կառույցներին առաջնությունը հատկացնելու, գտնում էր, որ եվրոպական ճարտարապետության վրա ազդել է հայկականը: Կոմունիստական որոշմանը նյութ էր տվել նաև մի գրախոսական, որում Տոկարսկու մասին գործածված հիշյալ նախադասությունը բառացի կրկնվում էր որոշման մեջ: Այդ գրախոսականը տպագրվել է Մոսկվայի 800-ամյակին նվիրված հողվածը պարունակող գիտական հանդեսին անմիջապես նախորդող համարում («Տեղեկագիր», 1948, № 2): Այստեղ Ստրծիգովսկին կոչված է «լեհական ռենեգատ»: Հայ գրախոսը կարծել է, թե գիտնականը հենց նոր փախել է Լեհաստանից Ավստրիա և դավաճանել է իր հայրենիքին: Լսենք Լեհաստանի պատրիոտ հային. «Լեհական ռենեգատ և գերմանական բուրժուական արվեստագիտության կարկառուն ներկայացուցիչ Յոզեֆ Ստրծիգովսկին... անտեսելով վրաց ճարտարապետությունը, հայկական շինարարական արվեստը հայտարարեց որպես ելակետ Եվրոպայի մի շարք երկրների ճարտարապետական մի քանի ձևերի առաջացման համար»:

Տոկարսկու և Ստրժիգովսկու «սխալներն» անմիջական կապ չունեն հայ-ռուսական եկեղեցիների հարաբերությունների հետ, բայց ես դրանք հիշեցնում եմ, որպեսզի ընթերցողը մտովի տեղափոխվի 1948 թվական և համոզվի, որ Մոսկվայի հոբելյանին նվիրված հոդվածների հեղինակների անունները նույնպես կհայտնվեին «սև ցուցակներում», եթե նրանք օգնության կարոտ եկեղեցու դերում ներկայացնեին ոչ թե հայ, այլ ռուս եկեղեցուն։ Թեև ավագը հայ եկեղեցին էր (700 տարով ավելի բովանդակալի կենսագրությամբ), սակայն «ավագ» բառի գործածության սահմանները 1948 թ. նեղացել, ամփոփվել էին միայն «ավագ եղբայր» արտահայտության մեջ։ Իսկ ավագ եղբայրը պետք է առաջնության դափնին կրեր բոլոր դեպքերում։

Որ 12—13-րդ դարերում հայերը հարգանքով են վերաբերվել ռուս եկեղեցուն՝ դրա լավագույն վկան է ռուսական առաջին սրբեր Բորիսի և Գլեբի անունների ներմուծումը հայոց Հայսմավուրքի մեջ։ Սա միաժամանակ վկայում է հայ եկեղեցու բացառիկ մարդասիրական բնավորության մասին։ Այն հանգամանքը, որ այդ սրբերին նվիրված բնագիրը մեր Հայսմավուրքում ավելի ընդարձակ է, քան Գրիգոր Լուսավորչի վարքը, վկայում է այն մասին, որ նախքան մուտքը Հայսմավուրք ռուս սրբերի հուզիչ պատմությունը հայ թարգմանիչները թարգմանել են ոչ թե Հայսմավուրքի համար, այլ որպես առանձին գրական երկ (այլապես՝ նրանք թարգմանելիս կհարմարեցնեին Հայսմավուրքի ծավալին)։ Նույն ժամանակաշրջանի հայ-ռուսական հարաբերությունների վկաներից են նաև Նովգորոդի Ներեդիցայի եկեղեցու որմնանկարները (թեև այս դեպքում գործ ունենք ընդդեմ «հայկական աղանդի» կիրառված «միջոցառման» հետ)։ Գոյություն ունեցող ենթադրության համաձայն՝ Լուսավորչի և Հոփսիսիանց նկարները Ներեդիցայի եկեղեցու պատերին նկարել են հայ նկարիչներ։ 12-րդ դարի հայ նշանավոր գործիչներից Գրիգոր Տուտեորդին ռուսական եկեղեցին մեծարում է «մեծափա եկեղեցին ռուսաց» արտահայտությամբ։ Այս ամենը խոսում է հայերի կողմից ռուսներին ցույց տրված (և ոչ թե՝ հակառակը) օգնության մասին։ Իսկ հակառակ պնդումն արդյունք է Գրիգոր Տուտեորդու գործածած հիշյալ արտահայտությունը պարունակող նամակի ոչ ճիշտ վերծանման։

Շուրջ 20 տարի առաջ, 1972 թ. փետրվարի 11-ին, «Գրական թերթում» տպագրված «Ներսես Լամբրոնացին առանց լուսապսակի» հոդվածում ես ցույց եմ տվել, որ Գրիգոր Տուտեորդու նամակում ռուս եկեղեցու հասցեին ուղղված մեծարական արտահայտությունում Ռուսաստանին օգնության խնդրանքով դիմելու իմաստ ենթադրելը թյուրիմացություն է։ Լրագրային հոդվածը վրիպել է մասնագետների ուշադրությունից, ուստի անհրաժեշտություն է առաջանում վերստին քննել խնդիրը, այս անգամ՝ ավելի հանգամանորեն։ Գրիգոր Տուտեորդու նամակն ուղղված է հայոց կաթողիկոս Գրիգոր Տղային։ Նամակի հրատարակիչ Ա. Տեր-Միքայելյանն արդեն վերծանել ու վերապատմել է նամակի բովանդակությունը («Արարատ», 1893, հատկապես՝ էջ 409—411) և կարելի էր բավարարվել նրա վերծանմամբ, սակայն Մոսկվայի 800-ամյակից հետո լույս տեսած աշխատություններում համընդհանուր ընդունելություն գտած թյուրիմացությունը ցույց է տալիս, որ քաղաքական նկատառումները գիտականից ավելի զորեղ են եղել։ Դրան նպաստել է նաև այն, որ նամակի հրատարակիչը հատուկ ուշադրություն չի դարձրել ռուս եկեղեցուն վերաբերող հատվածին (նա չէր կարող կոահել, որ 1948 թ. չարաշահվելու է նամակը)։

Մեզ հետաքրքրող հատվածում ծերունի Տուտեորդին դավանաբանական խնդիրների շուրջ խրատ է կարդում երիտասարդ կաթողիկոսին: Հայտնում է, որ Քրիստոսի բնությունը մեկ է և՛ որ հայոց դավանանքը (միաբնակ) արդար է: Բերում է տիեզերական եկեղեցու հայրերից վկայություններ ի նրա աստ մեր դավանանքի: Հորդորում է զինվել նրանցով և Քրիստոսի նման հետիոտն շրջել ու տարածել ուսմունքը. «հետիոտն յարևմտից մինչև յարևելս լնուլ զաւետարանն Քրիստոսի» այցելել Հոռոմ, Կոնստանդնուպոլիս, Ռուսաստան և այլուր, պահանջել նրանցից այն, ինչ պատշաճ է (միաբանություն դավանական խնդիրներում): Սակայն ոչ ոք պատշաճը չի մատուցի, որովհետև յուրաքանչյուր եկեղեցի ինքն իրեն է համարում ճշմարիտ: Միայն նամակով հնարավոր չէ գործը գլուխ բերել. «Այսպես և ոչ աւարտի ի ձեռն գրոյ»: Պետք է գնալ Հոռոմ, կայսեր մոտ. «Առ կայսր... ի Հոռոմս երթիցես... և՛ ամենայն ազգին Ֆռանգաց, առ ասորիս և ի քրիստոնէութեամբ պատուեալ մեծափառ եկեղեցիս ըռուսաց, խնդրեալ զպատշաճս ի նոցանէ: Եւ միով հաւանութեամբ թէ տայցեն, ճանապարհորդեա ի քաղաքն Կոստանդնուպօլիս»: Բայց ճանապարհորդություններն ապարդյուն կանցնեն, որովհետև այլևս չկա առաքելական ոգի, չկան ընտրյալ առաքյալներ. «Վասն զի չէ և չէ իսկ, զի չև է հոգի, և՛ ոչ նշանք առաքելականք, ոչ առաքեալք ընտրեալք»:

Ինչպես տեսնում ենք, ոչ մի ակնարկ չկա ոռուսաց եկեղեցուն օգնության դիմելու մասին: «Խնդրել» բառը նախադասությունում ունի «պահանջել» իմաստը և վերաբերում է ոչ թե ոռուսաց, այլ թվարկված բոլոր եկեղեցիներին: Այդ մասին են վկայում ինչպես նախադասության տրամաբանական ընթացքը, այնպես էլ «ի նոցանէ» և «թէ տայցեն» հոգնակի ձևերը: «Խնդրեալ զպատշաճս ի նոցանէ» նշանակում է եկեղեցիներից պահանջել միաբանություն: Ոչ միայն Տուտեորդին, այլև Մխիթար Գոշը համոզված էին, որ միաբանությունը հնարավոր չէ: Մեծ իրավաբանը գրում է. «Այն էր Աստուծոյ հաճոյ և Քրիստոսի կամք, զի ամենայն ազգ քրիստոնէից միակրոն էին լեալ, բայց չէ հնար» («Արարատ», 1901, էջ 126—127): Յուրաքանչյուր ազգ ձգտում է մյուսներին դարձնել դեպի իր կրոնը, վերջինս համարելով ամենաճշմարիտը. «Իւրաքանչիւր ազգ ցուցանէ սատանայ պատրողն ճշմարիտ լինել և ամենեքեան խորհին զայլս յինքեանս դարձուցանել, այլ ոչ զընտրութիւն ճշմարտութեան կամին և զմիաբանութիւն հաճութեամբ: Եւ այս ախտ ամբարտաւանութեան է, զի յոյնն զինքն կարծէ ճշմարիտ և հոռոմն զինքն, նմանապէս և ազգ ամենայն» («Արարատ», 1900, էջ 503): Կրոնները տարբեր են լինում և հեռավոր ժողովուրդների պատկանելու դեպքում անհիմանալի են. «Եւ ամենայն ազգ զանազան կրօնս ունի, որ ոչ է գիտելի վասն հեռաւորութեանն, որպէս հնդիկն և հաբաշին, նոբին և զանգին և խքոին... Այսպէս ազգ հիւսիսականք՝ ոռուզն և ալան և քազակն, խունձք, որ են սրոյրք...» (էջ 504): Այս տողերի գիտնական հեղինակը Գրիգոր Տուտեորդու ժամանակակիցն էր: Նրա համար ոռուսներն այնպիսի հեռավոր հյուսիսային ազգ են, ինչպես ալանները, կազակները և այլ ցեղեր: Այդպիսի մի ազգի օգնությանը դիմելն անհիմաստ կլիներ, որովհետև այն ժամանակվա պայմաններում գործնական օգնությունը եկեղեցիների մեջ հնարավոր չէր: Համենայնդեպս՝ Մխիթար Գոշի խոսքը վկայում է եկեղեցիների խորթության մասին:

Հայկական Սովետական Հանրագիտարանում (հտ. 3, էջ 223) հայտնվում է, թե Գրիգոր Տուտեորդին խորհուրդ է տալիս հենվել «քրիստոնէու-

թյան պատվար մեծավառ ոռու եկեղեցու վրա»։ Ըստ որում հանրագիտարանը ոռուական եկեղեցին համարում է համայն քրիստոնեության պատվարը։ Բայց մենք տեսանք, որ Տուստերդու նամակում այդ եկեղեցին հիշատակվում է ֆռանգների և ասորիների եկեղեցիներից։ Ինտո՞ւն՝ որ պատվար է համարվում յուրաքանչյուր եկեղեցի։ Նամակը գրված է հենց եկեղեցիների հավասարության դիրքերից։ Հանրագիտարանում հայտնվող «պատվարն» այլ բան չէ, քան Տուստերդու նամակում գործածված «պատուեալ» («քրիստոնեոթեամբ պատուեալ») բառի անուշադիր ընթերցումը։

Մոսկվայի հոբելյանի առթիվ գրված հոդվածից սկիզբ առնող երկրորդ թյուրիմացությունը, ինչպես ասվեց, վերաբերում է Ներսես Շնորհալուն, որն իբր գրել է հանելուկ ոռուների մասին և գործածել է ոռուներն «դենգի» բառը։ Այսքան հեշտ կյանքի կոչված և առաջին հայացքից միայն Շնորհալուն վերաբերող «գիտելիքն» իրականում առնչվում է ընդհանուր հայոց պատմությանը և կարող էր նոր էջ բանալ մեր և ոռու ժողովուրդների փոխհարաբերությունների պատմության մեջ, եթե ճիշտ լիներ։ Այն գոյացել է միայն և միայն Մոսկվայի հոբելյանը զարդարելու մղումով և չէր գոյանա, եթե մոտեցումը քաղաքական բնույթի չլիներ։ Շնորհալու հանելուկում ամեն ինչ (բացի վրիպակային «Ըռու» խորագրից) խոսում է ընդդեմ «գիտելիքի»։ Նախ՝ հանելուկի բովանդակությունը համապատասխանում է ոչ թե մարդկանց, այլ կենդանիների հատկություններին։ Երկրորդ՝ հանելուկները գրվում են ոչ թե միայն գիտունների, այլ ժողովրդի համար, հետևաբար ոռուներին ներկայացնող հանելուկ գրելու համար Շնորհալին պետք է համոզված լիներ, որ հայերը ոռուներին այնքան լավ են ճանաչում, որ նույնիսկ հանելուկային այլաբանությունները կարդալով կիմանան հասցեատիրոջը։ Այնինչ, ինչպես Մխիթար Գոշն է վկայում, Շնորհալու օրոք ոռուները հեռավոր ժողովուրդ էին։ Երրորդ՝ որպեսզի Շնորհալին ոռուներն «դենգի» բառը գործածեր՝ պետք է, որ ոռուներն իրենք էլ այդ բառը գործածած լինեին։ Սակայն մինչև այժմ ոռու բառարանագիրներն այդ բառը չեն գտել Շնորհալու ժամանակ գրված ոռուական ոչ մի թղթում։ Ռուսաց լեզուն բառը փոխ է առել թուրք-թաթարական ցեղերից, ավելի ուշ ժամանակներում։ Հանելուկի մեզ հասած տարբերակներից ամենաամբողջականը սա է.

Հաւսար քարձեր են գերդ ըզբուզ,

Մէկ մի չկայ յիրենք գըռուզ.

Մէկ-մէկ ի շուռ գան գուզ ի գուզ,

Ի ունին հազար դենկի խնդուզ,

Պընակ ունին դդմէ պըլուզ,

Ի ի ներս բանջար, ոսպն ու ընկուզ։

Թարգմանության կարիք ունեն առաջին երկու տողերը։ «Քարձը» Շնորհալու սիրած բառերից է և հանելուկներում գործածվում է բազմիցս։ Նշանակում է սակավ մորուք ունեցող, ոչ բարձր բուսած բույս (մազ)։ «Բուզ» բառը նույնպես բազմիմաստ է՝ այծյամ, հորթ, մոզի։ «Գոռուզ» նշանակում է խունուն, գանգուր, կնճոտ։ Այս բառերից ոչ մեկի գործածությունը ոռուներին չի հարմարվում։ Շնորհալին չէր կարող ոռուներին համեմատել հորթերի կամ մոզիների հետ և հայտնել, որ նրանք բոլորն էլ անմորուս են։ Մորուսն ոռուական կյանքում այնքան հաճախադեպ է, որ սկսած հնագույն գրավոր հուշարձաններից հիշատակվում է ամենուրեք։ Գոյություն ունեն

օրենքներ, առաժներ, բանաստեղծություններ, պատմվածքներ մորուսի վերաբերյալ: Որոշ երկերում «մորուս» բառը փոխարինում է «տղամարդ» բառին: Միջնադարյան մանրանկարներում և արվեստի այս բնագավառներում ոուսը պատկերվում է հաճախ մորուսով: Միայն կենդանիների մասին կարելի էր ասել, որ նրանք շրջում են մեկ-մեկ, առանձին-առանձին: Մի ամբողջ ազգ (մանավանդ ոուսները) չի կարող կուգեկուգ շրջել և համատարած հարթ մազեր ունենալ: Ռուսական ժողովրդական երգերում գանգրահեր տղան ամենասիրված անձերից է: Ի պատկյան տարեգրությունում իշխան Վոլոդոմիրը «բարձրահասակ էր... մազեր ուներ շեկ, գանգուր»: Հին ռուսական երաժշտական խազերից մեկը կոչվում է «գանգուր»:

Արդեն ասացի, որ Շնորհալու օրոք ոուսերենում «դենգի» բառը դեռ չէր գործածվում: Սակայն միայն այս փաստը բավական չէ Շնորհալու «ոուսախոսությունը» ժխտելու համար: Չի բացառվում այն հնարավորությունը, որ ռուսական մատենագրության մեջ չգրանցված մի բառ կարող էր պահպանված լինել հայ մատենագրության մեջ: Օրինակ՝ «կազակ» բառը ռուսերենում հայտնի է առաջին անգամ 1395 թվականին գրված մի քերականական աշխատությունից, այնինչ հայերենում այն գտնում ենք դրանից շուրջ 200 տարի առաջ գրված՝ Մխիթար Գոշի այն նամակում, որը ես վերը վկայակոչեցի հեռավոր եկեղեցիների առիթով: 12-րդ դարի հայոց կաթողիկոսին վերագրված ոուսերեն բառի գործածության հնարավորությունն իսպառ բացառող փաստն այն է, որ հիշյալ դարում առևտուրը Ռուսաստանում կատարվում էր ոչ թե դրամով, այլ բնամթերքով:

Լավագույն բնամթերքներից էր նաև սկյուռի մորթին, և հանելուկում ներկայացված է հենց սկյուռը իր թանկագին մորթով. «Ի ունին հազար դենկի խնդուզ»: Պարսկերեն «դանգ», հայերեն փոխառյալ «դանկ» («դենկ») բառը գործածվել է չափի, կշռի և դրամի իմաստներով: Շնորհալին այն գործածել է ոչ թե ուղղական, այլ սեռական հոլովով, հայտնելով, որ սկյուռի թանկ խնդուզն ունի հազար դենկի արժեք: Հայտնի է, որ սկյուռը բույն է դնում ծառի բնի մեջ և նրանում հավաքում է պաշար: Այդ բույնը հանելուկում կոչված է «դդմե պլուզ պնակ», որում հավաքված է պաշարը՝ բանջար, ոսպն ու ընկույզ: Եվ հիրավի՛, սկյուռը սնվում է թվարկված մթերքներով: Շնորհալու հանելուկները ձեռագրերում դասավորված են ըստ առարկաների բնույթի: Ազգերին ներկայացնող հանելուկները խմբված են կողք-կողքի: Ազգերի խմբի մեջ սխալմամբ հայտնվել է նաև պարխար կոչվող հյուսիսային քամին («պարխար բառը կարդացվել է «պարսիկ»): Եվ այդուհանդերձ «Ըռուզ» խորագիրը կրող հանելուկը գոնե սխալմամբ (վրիպակային խորագրի պատճառով) չի զետեղված ազգերին նվիրված հանելուկների խմբում: Այդ այդպես է, որովհետև ազգերին վերաբերող հանելուկները Շնորհալին հորինել է յուրահատուկ կառուցվածքով, որին չի համապատասխանում «Ըռուսը»: Վերջինս խանգարել է հանելուկի պատկանելությունը պարզելուն, և Շնորհալու գրածը զետեղվել է նրա հանելուկների վերջում, որտեղ հավաքված են ստույգ պատկանելությունից զուրկ հանելուկները: Հանելուկներում ներկայացված ազգերն ապրում էին Կիլիկիայի հայկական պետականության տարածքում և քաջ ծանոթ էին հայերին: Շնորհալին նրանց ներկայացնելիս գործածում է որոշակիորեն մարդկանց (և ոչ՝ կենդանիների) վերաբերող բառեր. «Ազգ մի գիտեմ հաւսար քաջեր» (հայեր), «հանճարեղ, խիստ արուեստաւոր» (ֆռանգներ), «գի յիւրեանց խաչն

չունի բևեռ» (հույներ), «մէկ հայն ծեծէ յիւրմէ հազար» (ասորիներ), «մի օտար չէ ինքն ասորին» (հրեաներ):

Ինչպէ՞ս է առաջացել «Ըռու» խորագիրը: Ամենայն հավանականութեամբ սկզբում գրված է եղել «Սկիռու», ապա գրիչների մեղքով մնացել է բառի միայն վերջին մասը՝ «-ռու», որն ընկալվել է որպէս ռուս ազգի անուն և ըստ այդմ էլ ընդօրինակվել է «ըռու» ձևով: Սկյութի լատիներեն անունն է «սկիռու»: Հետագայում «-ու» վերջավորությունը հայերենում վերացել է և մնացել է «սկիռ»: Հայկազյան բառարանի հեղինակները սկյութի հիշատակման որևէ դեպք չեն գտել մեր մատենագրության մեջ և բառարանում չեն գրանցել «սկիռ» բառը: Եթէ մեր ենթադրությունը հանելուկի վերնագրի աղճատման մասին ճիշտ է, ապա Շնորհալին մեզ ներկայանում է որպէս առայժմ առաջին հեղինակը միջնադարում, որը գործածել է «սկիռու» բառը (տառացիորեն տառադարձության ենթարկելով լատիներեն «սկիռուս»): Հանելուկներ պարունակող ձեռագրերում գտնում ենք վերնագրերի բազմաթիվ աղճատումներ (պարխար-պարսիկ, մաւ-նուռ, նետ-գետ, ջերմն-ոջիլ և այլն), որոնցից մեկն է մաւ՝ սկիռու-ըռու:

Եթէ գիտական խիղճը կորցնենք և առաջնորդվենք սոսկ քաղաքական նկատառումներով, ապա գերմանացիները կարող են Շնորհալու միևնույն հանելուկն օգտագործել «ապացուցելու» համար, որ հայոց կաթողիկոսը գերմանացիների մասին հանելուկ է գրել: Այսպէս պնդելու համար հանելուկը գերմանացիներին կտրամադրեր անհամեմատ ավելի շատ կրօնականներ, քան «Ըռուսի» դեպքում: Բանն այն է, որ Մատենադարանում պահվող ձեռագրերում հանելուկի ընդօրինակությունների մի մասի վերնագիրն է «Ըռու», մյուսինը՝ «Ալաման» (գերմանացի): Ըստ որում «Ալաման» ավելի շատ է: Այն դեպքում, երբ «Ըռուսին» խանգարում են առանձին-առանձին, կուգեկուզ շրջելը, որոնք ավելի շուտ կենդանիներին, քան մարդկանց բնորոշող հատկանիշներ են, «Ալամանի» դեպքում այդ խոչընդոտը վերանում է, որովհետև հանելուկից բացակայում են նշված հատկանիշներն արտացոլող տողերը: Եթէ «ըռուսի» դեպքում չունենք բացառապէս ոչ մի ստույգ տեղեկություն Շնորհալու օրոք Կիլիկիայում գտնված ռուսների մասին, ապա հանրահայտ իրողություն է, որ գերմանացիները խաչակիրների կազմում եկել էին Կիլիկիա, խնամիական կապեր էին հաստատել հայերի հետ: Այս փաստերը Մոսկվայի 800-ամյակի օրերին հրապարակելը պաշտոնական մարմինների կողմից կդիտվեին որպէս «արևմուտքի առջև ստորաքարշության» դրսևորում, և հանելուկի հրատարակչի անունը կմտներ այն ցուցակի մեջ, որում գրանցված էին Անառյանի և Տեր-Մինասյանի անունները: Եվ ընդհակառակը, «Ալամանը» պարունակող ձեռագրերի գոյության մասին չհայտնելը և թանկարժեք մորթի ունեցող սկյութին վերաբերող հանելուկը որպէս «Ըռու» ներկայացնելը «կհարըստացներ» 800-ամյակը:

«Հարստացնող» նյութերի շարքում է մաւ Մոսկվայի անունը պարունակող պոեմը, որը նույնպէս հայագիտության մեջ մտել է որպէս հայրուսական հարաբերությունների պատմությունը ծաղկեցնող գրական հուշարձան: Մատենադարանում պահվող ձեռագրերից ոչ մեկում պոեմը Մոսկվային չի նվիրված: Նրա վերնագրերն են. «Տաղ սիրոյ», «Տաղ ազնիւ և գեղեցիկ», «Տաղ ազնիւ ի վերայ կօզելի» («կօզել» նշանակում է գեղեցկութիւն և նկատի ունի պոեմի հերոսուհի իտալուհուն), «Տաղ ի վերայ գեղեցկոյն» և այլն: Պոեմի իրական բովանդակությունը միջնադարյան Արևել-

քում շատ տարածված սիրային մի պատմություն է, որի համաձայն՝ փեսացուն (թագավոր, թագվոր) գալիս է հարսնացուի մոտ և նրան խոստանում է աշխարհի բոլոր նշանավոր քաղաքները նվիրել, եթե գեղեցկուհին թույլ տա իրեն տեսնել կամ սիրել.

Թագաւորն էլ ի խնդիր եկաւ
Մոսկվայ ու Փորթութալայ...
Երես տեսնելէ իտոր
Սելանիկ ու զԱտրնայ...

Այսպիսի բովանդակությամբ տողեր կարելի է գտնել նաև պարսկական պոեզիայում.

Եթե սրտիս սիրահարվի շիրագցի այս սեգ թագուհին,
Նվեր կտամ Սամարղանդն ու Բուխարան իր հնդու խալին:
(Թարգմանեց Վ. Ներսիսյանը):

Մոսկվայից եկած փեսացուից հարսնացուն պահանջում է ոչ թե նրա առաջարկած քաղաքները, այլ Ստամբուլը, Վենետիկը, Իսպանիան: Իմանալով հանդերձ, որ փեսացուն եկել է Մոսկվայից՝ նա այս քաղաքը չի պահանջում: Նշանակում է պոեմը Մոսկվային նվիրված լինելու մասին խոսք չկա: Փեսացուի մոսկվացի լինելն էլ որոշակի չէ: Նա եկել է «Մոսկվայ ու Փորթութալայ»: Հրատարակիչը պոեմին վերնագիր է դրել իր ստեղծած «Տաղ ի վերայ Մոսկովու թագաւորին» խորագիրը, բայց այդ թագավորը Մոսկվան գովաբանելու փոխարեն հիշատակում է հայոց պատմությանն առնչվող Հոռոմը.

Տրդատ և սուրբըն Գրիգոր
Եկին, խոր եղան Հոռոմայ...
Իջնունք ի յԷջմիածին...

Թագուհին իտալուհի է, այժմ Հարավսլավիայի կազմում գտնվող Պոլա քաղաքից, որն այն ժամանակ պատկանում էր Վենետիկյան հանրապետությանը: Այստեղ ժամանակին կային նաև հայեր, հայկական եկեղեցիներ: Պոեմի հեղինակը «Պոլա» գրելու փոխարեն գրում է «Պոլիա».

Թագուհի, դու յայն քաղաքէն,
Որ կոչի անուն Պոլիայ:

Դարձյալ Ադրիատիկ ծովի ափին գտնվող Անգոնա (Անկոնա) քաղաքի անվան մեջ նույնպես երկրորդ «ա»-ից առաջ հեղինակն ավելացնում է «ի» տառը՝ «Անգունիա» (Սիմեոն Լեհացին գրում է «Անգոնա»): Առհասարակ պոեմի հիման վրա կարելի է կազմել աշխարհագրական անունների բառարան: Հեղինակը ծանոթ է նաև Վարդան Արևելցու «Աշխարհացույցին», որից տեղեկություններ է քաղել: Դժբախտաբար հրատարակիչը Պոլան շփոթել է Կոնստանդնուպոլսի հետ (թեև այս քաղաքն այն ժամանակ այդպես չէր կոչվում և հենց պոեմում կոչված է Ստամբուլ) և իր վրիպակի վրա կառուցել է Սոֆիա (Զոյա) Պալեոլոգի և Իվան Գ ցարի ամուսնու-

թյանը վերաբերող մի տեսություն, որի համար պոեմում իրական հիմք չկա:

Հայ-ռուս եկեղեցական հարաբերությունները միայն հայերին չեն վերաբերում, ուստի նրանց պատմությամբ պետք է, որ զբաղվեին նաև ռուս մասնագետները, մանավանդ, որ Գրիգոր Լուսավորչի պաշտամունքն Ռուսաստան մուտք է գործել ավելի վաղ, քան որևէ ռուս սրբի պաշտամունք: Ռուսաստանյան ամենանշանավոր տաճարների պատերին նկարված են եղել (ու այսօր էլ կան) Գրիգոր Լուսավորչին ու Հռիփսիմեն, Գայանեն, բազմաթիվ ծիսական ժողովածուներում կարելի է գտնել տեղեկություններ Գրիգորի մասին և՛ նրան պատկերող մանրանկարներ: Ռուս մատենագրության մեջ հայկական եկեղեցուն վերաբերող տվյալներն ավելի շատ են, քան հայ մատենագրության մեջ ռուսականին վերաբերողները: Նման պայմաններում սպասելի է, որ ռուս մասնագետներն ավելի շատ ուսումնասիրած լինեին միջին դարերի ռուսական և հայկական եկեղեցիների հարաբերությունների պատմությունը: Սակայն իրականում միայն հատուկեմտ մարդիկ են հետաքրքրվել խնդրո առարկայով: Սա է պատճառը, որ Ղ. Այվազյանը կանգնած է եղել շատ ծանր մի առաջադրանքի առջև: Նա դժվարությամբ է նյութեր հավաքել նույնիսկ տպագիր աղբյուրներում: Թվում է, թե գոնե որոշակիորեն Գրիգոր Լուսավորչին վերաբերող տպագիր ձեռագրացուցակներում նա առանց դժվարության գտնելու էր անհրաժեշտ տեղեկություններ: Բայց սպասելիքները չեն արդարանում, որովհետև ձեռագրացուցակների հեղինակները բավարարվել են միայն սլավոնական սրբերին վերաբերող տեղեկությունները նշելով: Մենագրության միայն 65-րդ էջում թվարկված ավելի քան քսան ձեռագրերում Գրիգորի մասին հայտնվող տեղեկությունները ոչ մի տեղ չի նշված, և առաջին անգամ հայտնաբերել և հրապարակել է Այվազյանը:

Մենագրությունում օգտագործված գրականության մեջ չգտնելով որևէ հիշատակություն 1978 թ. ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի հրատարակած «Ռուսական հնատիպ գրականությունը... Պրոլոգ» ժողովածուի մասին, մասնագետները կարող են շտապել եզրակացնել, որ հեղինակը ծանոթ չի եղել ժողովածուին: Վերջինս հենց այն գիրքն է, որում ամենից շատ էր սպասվում Լուսավորչի հիշատակությունը (Ռուսական Պրոլոգի բոլոր ձեռագրերում նշվում է Լուսավորչի հիշատակի օրը՝ սեպտեմբերի 30-ը), սակայն մենագրությունում այս ժողովածուի անտեսումը բացատրվում է ռուս հրատարակիչների ճաշակով: Գրիգոր Լուսավորչի վարքը նրանց չի հետաքրքրել, թեև հայ սրբի խորվիրապյան կալանքը թունավոր օձերի հետ, Տըրդատի խոզ դառնալն ու վերստին մարդանալը համաշխարհային գրականության թեմաներից են և հետաքրքրել են եվրոպացիներին դեռևս խոր միջնադարում:

1983 թ. դեկտեմբերի 8-ին Մատենադարանի 19-րդ գիտական նստաշրջանում կարդացված «Լուսավորչի ավանդության մի արձագանք միջնադարյան Ֆրանսիայում» զեկուցման ժամանակ մենք հանգամանորեն հակադրել ենք արևմտյան և արևելյան եկեղեցիների տարբեր մոտեցումները հայկական թեմաների նկատմամբ: Արևմտյաններին հատուկ է համակրանքը: Դրա ցայտուն վկաներից է 1320-ական թվականներին Հայաստանում գտնված Ֆրանսիական քարոզիչ ժուրդեն դե Սևերակը: Հայաստանը նրա համար սուրբ հող է, «Այստեղ, Մեծ Հայքում է չարչարվել մի փառավոր

կույս, արքայադուստր, Սկալա անվամբ: Եվ այստեղ են նետել Խորվիրա-
պի մեջ, առյուծի և վիշապի հետ միասին, սուրբ Գրիգորին, որը հայերին
և նրանց թագավոր Տրդատին ուղղափառ հավատի է բերել սուրբ Սիլվեստ-
րի և Կոնստանդին կայսեր օրոք»: Առաջին հաջադեպից պարզ սխալի տպա-
վորություն թողնող առյուծի և վիշապի հիշատակությունը, որը ոչ մի ուրիշ
տեղ չի հանդիպում, արդյունք է Գրիգոր Լուսավորչի արտակարգ մեծար-
ման: Համաշխարհային գրականության մեջ միայն աստվածատուր սրբերին
հավասարվող մեծություններն են առյուծի և վիշապի հետ անվնաս բնակ-
վում: Հայկական Հայսմավորքում այդպիսի պատիվ է հատկացված հայոց
առաքելական եկեղեցու անվանադիր Թադեոս առաքյալին, որին նույնպես
գցում են առյուծների մոտ: Աստվածաշնչում առյուծների հետ միասին խոր-
վիրապ են նետում Դանիել մարգարեին, որի սրբության պատճառով առ-
յուծները նրան ոչ միայն չեն հոշոտում, այլև ոտքերն են լիզում: Արտա-
կարգ մեծարման արդյունք է նաև Սանատրուկ արքայի դուստր Սանդուխ-
տին Սկալա (լատիներեն՝ սանդուխթ) կոչելը: Աստվածաշնչում Հակոբի
սանդուխթը, որով ելևեջում էին հրեշտակները, սրբազան իմաստ ունի: Որոշ
ավանդություններում այն համարվում է Մարիամ Աստվածածնի խորհրդա-
նիշը: Իսկ համաշխարհային բանահյուսության մեջ սանդուխթը տիեզերքի
հավասարակշռությանը հսկող սուրհանդակ է: Հատկապես Իտալիայում
հայտնի են Սկալա անվամբ նշանավոր կանայք: Վենետիկի հանրապետու-
թյան նախագահ Ալեսսանդրա Սկալային Ֆլորենցիայի համալսարանի ճար-
տասանության ուսուցիչ Անջելո Պոլիցիանոն կոչում է «Ամմահ կույս, հան-
ճար... Սկալա»:

Արևմուտքում Գրիգոր Լուսավորչի մեծարման լավագույն օրինակներից
է նաև 1394—1427 թթ. արևելյան երկրներում ճանապարհորդած Յոհաննես
Ծիլտբերգերի ուղեգրությունը, որի 64-րդ գլուխը նվիրված է Լուսավորչին
և կոչվում է «Սուրբ Գրիգորի մասին»: Նախորդ գլխի խորագիրն է. «Հայե-
րի հավատի մասին»: Սույն գլխում շուրջ տասն անգամ տրվում է Գրիգոր
Լուսավորչի անունը, պատմվում է Հռիփսիմե կույսի, Տրդատի խոզ դառ-
նալու, Գրիգորին Խորվիրապ նետելու մասին: Սրանք փաստորեն Ագաթան-
գեղոսի պատմության առաջին արձագանքներն են Գերմանիայում: Ուղե-
գրությունում հայտնվող որոշ տեղեկություններ բխում են «Դաշանց թըղ-
թից»: Գերմանացին գործածում է հայերեն «թագավոր» և «կաթողիկոս» բա-
ռերը, իսկ ուղեգրության վերջում ամբողջությամբ զետեղում է «Հայր մեր»
աղոթքի հայերեն տեքստը, լատիներեն տառերով: Ծիլտբերգերի գիրքը տը-
պագրվել է Աուգսբուրգում 1473—1475 թթ., իսկ սա իր հերթին նշանակում
է, որ դեռևս Հակոբ Մեղապարտից 39 տարի առաջ, 15-րդ դարում, տպա-
գրվել է հայերեն տեքստ: Սա հայերենի առաջին տպագիր նմուշն է աշ-
խարհում: Ի դեպ՝ Ծիլտբերգերը Հռիփսիմե կույսին սխալմամբ կոչում է
Սուսաննա, որով կողմնակիորեն ցույց է տալիս, որ ծանոթ է եղել նաև Շու-
շանիկի վարքին:

Յոհաննես Ծիլտբերգերի ուղեգրության 66-րդ գլխի վերնագիրն է.
«Հույներն ինչո՞ւ են հայերին թշնամի»: Գերմանացի հեղինակը պատմում է
մի շատ հետաքրքիր ավանդություն, թե ինչպես է ծագել թշնամանքը: Ա-
վանդության քննությունը թողնելով մեկ այլ առիթի, առայժմ հույների թըշ-
նամանքն օգտագործենք առարկելու համար Ղ. Այվազյանի մի մեկնաբան-
մանը ռուսական միտրոպոլիտ Կիպրիանի վերաբերյալ: Ռուսաստանում
Հունաստանի ներկայացուցիչը հանդիսացող այս եկեղեցական գործիչը

գրել է. «Հայկական աղանդը բոլոր աղանդներից ամենանողկալին է»: Ղ. Այվազյանը գտնում է, որ «հայկական աղանդ» ասելով հասկացվել է պավլիկյան աղանդը: Հարգարժան գիտնականին, սակայն, քաջ հայտնի է, որ սլավոնական մատենագրության մեջ պավլիկյանները կոչվում էին հենց «պավլիկյան» և՛ որ «հայկական աղանդ» ասելով հասկացվել է առհասարակ հայոց դավանանքը, որը գրգռում էր ուղղափառ եկեղեցիներին (բյուզանդական, ռուսական, վրացական): Կիպրիանը հունական եկեղեցու դրածոն էր Ռուսաստանում և հունարենից ռուսերեն փոխադրելով համապատասխան դրույթներ, դրանք իր գրավոր աշխատություններով տարածում էր: Անշուշտ սպասելի է, որ թշնամանքը հայերի նկատմամբ մեղմանար գոնե այն ժամանակ, երբ վայրի քոչվորները հարձակվել էին և՛ հայերի, և՛ ռուսների վրա, սակայն, ինչպես ցույց է տալիս դեպքերի ժամանակակից Յոհաննես Ծիլտերգերը, կրոնական անհանդուրժողականությունը շարունակվել է: Այդպես է եղել նաև նախորդ դարերում: Հայ-վրացական հարաբերությունների ծաղկունքի օրերին ազգությամբ հայ Իվանե սպասալարն իր ազգակիցներին սպառնում էր վրացադավան դարձնել: Թշնամանքը հրահրողը դարձյալ բյուզանդական եկեղեցին էր: Մխիթար Գոշը Ջաքարե և Իվանե սպասալարներին ուղղված թղթում բերում է վրաց կաթողիկոսին հասցեագրված նամակը, որում ինքը հայտնում է, որ հույները վրացիներին սովորեցրել են հայերին համարել ավելի վատթար, քան տաճիկներն ու հրեաներն են. «Տաճիկն ու ջահողն լավ է, քան զհայն, և այդ ի հոռումէն եք լսել» («Արարատ», 1900, էջ 498): Այժմ ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի գրադարանում պահվող մի անտիպ ձեռագրում (էջ 490 բ) կարդում ենք (թարգմանում են հին սլավոներենից). «Եթե քրիստոնյան նրանց եկեղեցու մոտով անցնի (իբր՝ հայերը քրիստոնյա չեն—Գ. Ա.) և նրանք երգելիս լինեն, պետք է ականջները փակելով փախչի, որպեսզի ձայնը չմտնի ականջները»: Ձեռագիրը եկեղեցական և մասամբ էլ աշխարհիկ օրենքների ժողովածու է և գիտության մեջ կրում է «Կորմչայա Բալաշովա» անունը: Նման ժողովածուները հունական ծագում ունեին, ատելությունը գալիս էր հունաց եկեղեցուց:

Ի պատիվ հայ առաքելական եկեղեցու՝ պետք է ասել, որ այն միշտ արթուն է պահել աշխարհի հնագույն քրիստոնեական եկեղեցուն վայել իր արժանապատվության զգացումը: Թշնամանքներին նայել է ներողամտաբար, ավագ քրիստոնյայի դիրքերից: «Թեև ատիմք ի նոցանէ՝ ոչ ատեամք զնոսա» («Թեև նրանցից ատվում ենք՝ չենք ատում նրանց»): Ներսես Լամբրոնացու սույն արտահայտությունը թևավոր խոսքի նման ուղեկցել է մեր եկեղեցուն բոլոր դարերում: Հայոց թագավոր Լևոն Մեծագործի վարած քաղաքականությունը կարող է օրինակ ծառայել քաղաքակիրթ կոչվող քաներորդ դարի յուրաքանչյուր պրեզիդենտի համար: Օտար ժամանակագիրները նկատել և սերունդներին ավանդել են նրա վեհանձնության մասին խոսող տեղեկություններ: Ասորի մատենագիր Միխայել Մեծը պատմում է (բերում են ասորերենից մեր նախնիների թարգմանությամբ). «Եւ ոչ միայն զհամազգի վանորայսն այնպէս փարթամացուցանէր, այլև զայլալեզու քրիստոնէից, զասորոց և զփռանգաց, այլև զյունացն և զվրաց, ոչ պահելով նոցա ռիս, զոր արարին նոքա ընդ նմա և ընդ ազգն նորա արեմայս, այլև ընդ ամենայն ուղղադավանս առ հեռաւորս և առ մերձաւորս» (Միխայել Ասորի, Ժամանակագրություն, Երուսաղեմ, 1870, էջ 500—510): Ոխ չպահելով («ոչ պահելով նոցա ռիս») և քրիստոնյային հատուկ համամարդկային

սիրով տոգորված, հայոց եկեղեցին համերաշխություն էր ցուցաբերում կարիքավորների նկատմամբ: «Բորիսի և Գլեբի ասքի հունարեն ենթադրյալ տարբերակի խնդրի շուրջ» ուսումնասիրությունում (Լենինգրադ, 1982) մենք արդեն նշել ենք այն փաստը, որ հունական եկեղեցին ուսականին պատժելու համար հնարում էր զանազան վարկաբեկիչ պատմություններ և դիտավորյալ կերպով լուրջյան էր մատնում Ասքը, այն չներմուծելով Հայսմավուրքի ընթերցումների շարքը: Նրան հետևեց նաև վրացական եկեղեցին: Արևելյան քրիստոնեական եկեղեցիներից միայն հայկականն է, որ ուս սրբերին տեղ հատկացրեց Հայսմավուրքում: Կարելի է չկասկածել, որ սա կարեկցանքի քայլ էր, ընդդեմ հունական եկեղեցու, հոգուտ ուսների:

1988 թ. երկրաշարժի առիթով Լոնդոնում դողանջեցին հռչակավոր Բիգ Բենի զանգերը, արտասահմանյան եկեղեցական գործիչները (Հերման Գոլտց, Ֆրիդերիկե Շտոքման-Կյուբերտ և ուրիշներ) Գորբաչովին և համաշխարհային հասարակայնությանը դիմումներ և կոչեր հղեցին մեր ժողովրդի այսօրվա վիճակի մասին, Ամերիկայում հրեաների երեք միլիոնանոց կազմակերպության ներկայացուցչությունը որոշում ընդունեց հոգուտ հայերի, Ավստրիայի նույնիսկ կոմունիստական «Ֆոլկսշտիմեն» հրապարակեց Սումգայիթի բոլոր զոհերի լուսանկարները, բազմաթիվ խորհրդարաններ բողոքեցին հայոց ժամանակակից ցեղասպանության դեմ: Սակայն Մոսկվայի Կարմիր հրապարակի վրա գտնվող Գրիգոր Լուսավորչի եկեղեցու շրջակա եկեղեցիներից ոչ մեկի դողանջը չլսվեց նույնիսկ այն ժամանակ, երբ հրապարակը ծածկված էր Բաքվից փախած հայերի վրաններով և երբ Կարմիր մայրաքաղաքում հացադուլ էր հայտարարել աշխարհահռչակ Վիկտոր Համբարձումյանը: Եվ այդուհանդերձ այսօր հայկական եկեղեցին ուսականի ամենաջերմ բարեկամն է: Ոչ մի հանրապետությունում Ռուսիայի դարձի 1000-ամյակը չնշվեց այնպիսի շուքով, ինչպես նշվեց 1988 թ. մայիսին Հայաստանում: Ամենայն Հայոց Կաթողիկոսարանում հրավիրված գիտական նստաշրջանում ելույթներ ունեցան տարբեր տեղերից եկած հեղինակավոր մարդիկ: Բացահայտվեցին հայ-ուսական հարաբերությունների վերաբերյալ նոր փաստեր, որոնք բոլորն էլ խոսում էին ի նրա պատ հայերի առաջնության: 700 տարով ավելի ավագ հայ եկեղեցին այս անգամ նույնպես հավատարիմ մնաց իր ավագությանը:

1000-ամյակին նվիրված «միջոցառումներից» լավագույնների շարքը պետք է դասել Ղ. Այվազյանի մենագրությունը, որի առաջին էջին նախորդող հատուկ թերթի վրա դրոշմված է ընծայականը. «Ռուսիայի մկրտության 1000-ամյակին»: Գրքի շապիկի վրա գետեղված Գրիգոր Լուսավորչի միջնադարյան մանրանկարն իսկ խոսում է մենագրության հիմնական բովանդակության ու կողմնորոշման մասին: Հեղինակը Գրիգոր Լուսավորչի ուսաստանյան պաշտամունքի լավագույն մասնագետն է ինչպես հայագիտության, այնպես էլ սլավոնագիտության բնագավառներում: Մենագրությունը շարադրված է բարեկիրթ գիտնականին պատիվ բերող քաղաքավարությամբ (թեև՝ մեր օրերում գիտության մեջ քաղաքավարության մասին խոսելը կարող է թողնել հնաոճ խոսակցության տպավորություն): Ես չգիտեմ, թե տասը տարի հետո, քսանմեկերորդ դարի շեմին, մարդկությունն ինչ վիճակում է լինելու և ինչպես է նշելու պետական քրիստոնեության 1700-ամյակը, բայց կարող եմ այժմ իսկ հավաստել, որ Այվազյանի մենագրությունը լավագույն նվերներից կլինի այդ հոբելյանին, եթե հրատարակվի հայերեն, նույնքան

ներին ներկայացնելու բնագավառում, պետք է խոստովանենք, որ Լուսավորչի պաշտամունքը պավլիկյանների հետ կապելու վարկածը մեզ չի համոզում ո՛չ Ռուսիայի, ո՛չ էլ Բյուզանդիայի դեպքերում: Մենագրությունում զետեղված են հեղինակի հայտնաբերած մատենական մանրանկարներ, առաջին անգամ հրապարակված են հայ սրբերին ուսական եկեղեցիներում պատկերող հոյակապ որմնանկարներ և այլ սրբապատկերներ (այս պատկերների վերահրատարակությունը մենագրության հայերեն բնագրում կհանդիսանա հայոց դարձի 1700-ամյակի լավագույն նվերներից մեկը): Այս ամենը ի մի բերելիս ավելի ցայտուն է երևում Գրիգոր Լուսավորչի մեծությունը, որի համեմատությամբ պավլիկյանները շատ անհամապատասխան են երևում, որպեսզի նրանց պատճառով Ռուսաստանում պաշտվեին հայ սրբերը: Ընդունված է կարծել, թե Գրիգոր Լուսավորիչը Բյուզանդիայում տիեզերական սրբերի շարքն է դասվել սկսած 9-րդ դարից, սակայն հայտնի է, որ նրա վարքը հունարեն և այլ լեզուներով թարգմանված էր շատ ավելի վաղ: Իսկ թարգմանվելն այլ բան չէր նշանակում, քան պաշտվել, որովհետև թարգմանվողը սրբի վարք էր:

«Բորիսի ու Գլեբի ասքի» հունարեն կարծեցյալ բնագրի առեղծվածին նվիրված վերոհիշյալ հոդվածում մենք առիթ ունեցել ենք նշելու այժմ Վատիկանի մատենադարանում պահվող Ասենյանի ավետարանի էջերից մեկում գտնվող օրացուցային գրանցումը Գրիգոր Լուսավորչի հիշատակը եկեղեցում տոնելու մասին: 10-րդ դարի վերջում ընդօրինակված այդ ձեռագրում գրանցված են միայն բացառիկ մեծության սրբերը: Չի նշված ոչ մի ուսուրբ, թեև ձեռագիրն ընդօրինակված է Բորիսի և Գլեբի նահատակվելուց հետո: Մոտավորապես մեր Ճաշոցին մոտեցող ապրակոս-ավետարանը թարգմանված է հունարենից հին սլավոներենի և գրված է գլագոլիցյան տառերով: Վերջիններով ընդօրինակված մատյաններից մեզ հասել են հագիվ տասը ձեռագիր: Թարգմանիչ է համարվում սլավոնական դպրության հիմնադիր Կիրիլ-Կոստանդինը: Նրա երկը դիտվում է որպես սլավոնական տառերով և սլավոներեն լեզվով գրված առաջին գիրք, ինչպես մեզանում՝ Առակաց գիրքը, որն սկսվում է «Ծանաչել զիմաստութիւն և զխրատ» բառերով և որը նույնպես թարգմանված է հունարենից: Ավելի հին սլավոներեն գրքի գոյության հնարավորությունը բացառվում է, ուստի մեր բացահայտածն այլ բան չէ, քան հայերին վերաբերող հնագույն տեղեկությունը սլավոնական գրականության մեջ: Սա էլ իր հերթին նշանակում է, որ առաջին իսկ սլավոներեն գրքում առկա են հայերին վերաբերող տեղեկություններ՝ Գրիգոր Լուսավորչի անունը և Մեծ Հայքի հիշատակությունը: Հայերեն թարգմանությամբ կստացվի այսպես. «Սեպտեմբեր ամսի 30. Մեծ Հայքի արքեպիսկոպոս սուրբ սրբազնափառ նահատակ Գրիգորի» (այսինքն՝ Գրիգորի հիշատակի օրն է): Ավետարանում նշված է, թե ինչ պետք է եկեղեցում կարդալ այդ օրը: Հետագա տարիներին հին սլավոներենից թարգմանված ապրակոս-ավետարաններում գրեթե բառացի կրկնվում է Կիրիլ-Կոստանդինի թարգմանությունը: Ահա այս նախապարհով է Ռուսիա թափանցել Գրիգոր Լուսավորչի պաշտամունքը, չառնչվելով պավլիկյանների աղանդին: Նովգորոդի եկեղեցու պատերի որմնանկարները նույնպես արձագանքներն են Կիրիլ-Կոստանդինի թարգմանածի:

Դեռևս նախքան ապրակոս-ավետարանի թարգմանությունը Կիրիլ-Կոստանդինը հայերի մասին խոսել է 867 թ., Հռոմում, երբ նրան մեղադրում էին սլավոնական տառեր հնարելու մեջ: Մեղադրողները գտնում էին, որ

աստիճան եկեղեցականների սիրալիր հանդիպումները: Բովանդակ ոռոսական մատենագրության մեջ մինչ այդ չէր գրվել որևէ այլ երկ հայոց կաթողիկոսի և ոռոս պատրիարքի փոխադարձ մեծարանքների մասին: Հայտնի է, օրինակ, որ Իվան Ահեղի օրոք հայոց կաթողիկոսը մեկնել է Մոսկվա, բայց ոռոս մատենագրության մեջ նրա հանդիպումները չեն գրանցվել: Արսենի Սուխանովը նկարագրել է 1652 թ. հայոց կաթողիկոս Փիլիպոս Աղբակեցու և ոռոս պատրիարք Պանսիի հանդիպումները, որոնք վերաժվել են կատարյալ տոնախմբությունների: Հայ-ոռոս եկեղեցական հարաբերությունները երբեք այդպիսի բարձունքի վրա չեն գտնվել: Երևույթի բացատրությունը պետք է բացատրել հանդիպման վայրով, որը ո՛չ Հայաստանն էր, ո՛չ էլ Ռուսաստանը: Եկեղեցականները հանդիպեցին Երուսաղեմում, որտեղ հայոց եկեղեցին մինչև օրս կարողանում է պահպանել իր հզորությունը: Այստեղ, ի տարբերություն աշխարհի մյուս վայրերի, որտեղ ամպագորգոռնառներ են արտասանվում մարդու իրավունքների և ժողովուրդների բարեկամության մասին, հայերն օգտվում են մեծաքանակ ժողովուրդների հետ հավասար իրավունքներով: Քրիստոսի գերեզմանն ամփոփող Հարության տաճարը հավասարապես պատկանում է հայերին, այնքանով, որքանով՝ համայն կաթողիկոսությանն ու ուղղափառությանը: Այստեղ Գրիգոր Լուսավորչի դավանանքն իսկապես հնագույն քրիստոնեական պետության կրոնի ազդեցություն ունի: Ծի՛շտ է, այդ ազդեցությունը ձեռք է բերվել և պահպանվում է նյութական, ֆիզիկական և հոգևոր ուժերի գերագույն համագործակցության շնորհիվ, սակայն արդյունքը պատվաբեր է և ուսանելի:

